



վեպ»ի տարիքը եւ թէ՛ նրանում տպագրուած տարաբնոյթ յօդուածներն ու հրատարակումները՝ դեռեւս կան խնդիրներ, որոնց ուսումնասիրողները կա՛մ չեն անդրադարձել, կա՛մ խորը ուսումնասիրութեան չեն արժանացրել:

Զարմանալիօրէն մինչ օրս բաց է մնացել «Բազմավեպ»ի հայերէն ձեռագրերի հետ ունեցած կապի քննութիւնը<sup>3</sup>: Զարմալիօրէն, քանի որ անհնար է չնկատել «Բազմավեպ»ի էջերում հայերէն ձեռագրերին նուիրուած հարիւրաւոր յօդուածները, չտեսնել «Բազմավեպ»ի խմբագիրներին եւ յօդուածագիրներին մէջ յայտնի ձեռագրագէտ Մխիթարեան հայրերի ու անուանի գիտնականների եւ ի վերջոյ մոռանալ, որ «Բազմավեպ»ը ստեղծուել է մի Միաբանութիւնում, որտեղ հայերէն ձեռագրերի հաւաքումը, դրանցում

1-9: Ս. ՇՏԻԿԵԱՆ, «Բազմավեպ» հանդէպ (հիմնադրման 150-ամեակի առթիւ), «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1993 թիւ 4, էջ 72-81 (նոյնը՝ Ս. ՇՏԻԿԵԱՆ, Վեներալի Միջօրեանների «Բազմավեպ» պարբերականը, «Բազմավեպ», 153 (1995), թիւ 1-4, էջ 5-15): Պ. ՅԱՎՈՐԵԱՆ, «Բազմավեպի» մէկուկէս դարը, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1993, թիւ 3, էջ 192-195: Տ. ԵԱՐՏԵՄԵԱՆ, Վեներալի Միջօրեաններու «Հայկական կանառ»ը, «Բազմավեպ», 151 (1993), թիւ 1-4, էջ 73-99. 153 (1995), թիւ 1-4, էջ 37-100 (վերհրտ. առանձին գրքով, Ս. Ղազար, Վեներալի 2000): Ն. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ, Յարգանք խորին 150ամեայ «Բազմավեպ»ին (1843-1993), «Բազմավեպ», 32 (1994), բացառիկ, էջ 9-22: Ս. ՃԵՄՃԵՄԵԱՆ, «Բազմավեպ»ին ծնունդը, «Բազմավեպ», 32 (1994), բացառիկ, էջ 49-66: Լ. ԶԵՔԻԵԱՆ, «Բազմավեպ». հայագիտական հանդէսներու նահապետը (150-ամեայ յոբելեանի առթիւ), «Պատմա-բանասիրական հանդէս», 1995, թիւ 1, էջ 103-110: Հայ պարբերական մամուլի պատմութիւն, XVIII-XIX դարեր, Ա. ԽՍՈՍՏԵԱՆ – Լ. ԳԵՈՐԳԵԱՆ – Մ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, (խմբ.), հտ. Ա., Գահիրէ 2006, էջ 62-71: Լ. ԽԱՉԱՏՐԵԱՆ, Միջօրեանների «Բազմավեպ» հանդէպ (1843-1880-ական թուականներ), սեղմագիր, Երեւան 2012: Վ. ԴԵՐՆԻԿԵԱՆ, Մուրթ Ղազարի մշտանորոգ լոյսը, «Վեմ», 2017, թիւ 4, էջ 1-20: Լ. ԽԱՉԱՏՐԵԱՆ, Միջօրեանների մամուլը («Բազմավեպ» 1843-1880-ական թթ., դասախօսութիւններ), ԵՊՀ հրտ., Երեւան 2019, եւ այլն:

3 Անհրաժեշտ է նշել, որ «Բազմավեպ»ի՝ հայերեն ձեռագրերի ներկայացմանը էջեր տրամադրելը անտեսուած չի եղել ուսումնասիրողների կողմից, տարբեր առիթներով այդ մասին խօսուել է, բայց այն առանձին գիտական խնդիր չի դարձել, այլ մնացել է յօդուածներում, ուսումնասիրութիւններում, գեկուցումներում հպանցիկ նկատառում կամ ըստ պատեհի ասուած խօսք՝ առանց յստակ հիմնաւորումների, եզրակացութիւնների ու գնահատումների:

առկայ միջնադարեան բնագրերի հրատարակումը ի սկզբանէ ծրագրուած քաղաքականութեան մաս էր<sup>4</sup>:

Ամենեւին չենք կարծում, թէ այդ բացը հնարաւոր է լրացնել մէկ, առաւել եւս մեր այս քննութեամբ, սակայն մեծ ցանկութիւն ունենք մեր համեստ ներդրումն ունենալու Մխիթարեան հայրերի մեծ աւանդի արժեւորման գործում:

«ԲԱԶՄԱՎԵՊ»Ը ԵՒ ՀԱՅՆԵՐԷՆ ԶԵՆՈՒԳՐԵՐԸ

Վեներալի Մխիթարեան միաբանութեան հայերէն ձեռագրերի հաւաքածուն պարունակում է շուրջ 3000 ձեռագիր եւ քանակով երրորդն է հայերէն ձեռագրերի հաւաքածուների շարքում: Յայտնի ձեռագրագէտ, պատմաբան, Երեւանի Մատենադարանի երկարամեայ գլխաւոր աւանդապահ, երջանկայիշատակ Գէորգ Տէր-Վարդանեանն այսպէս է բնորոշել հաւաքածուն. «Վեներալի Միջօրեանների ձեռագրական հաւաքածուն մի բառով կարելի է տիկի Միջօրեանի ձեռագրական հաւաքածուն մի բառով կարելի է նկարագրել «ընտիր» կամ «ընտրովի», որովհետեւ Միաբանութիւնը սերբերէն դէտերմինը ծրագրուած եղանակով փնտռել, գտել եւ ստացել կամ ընդօրինակելով ձեռք է բերել այն, ինչ պէտք է եղել իր ընթացիկ կամ հետակարային գիտական, կրթական, մշակութային ու լուսարարական խնդիրների իրագործման համար, ձգտել եւ ունեցել է որեւէ երկի՝ միայն իր ունեցածից աւելի լաւ օրինակը»<sup>5</sup>:

Այս ձեռագրերի մեծ մասը նկարագրուած է Հ. Բարսեղ Սարգիսեանի, Հ. Գրիգոր Սարգսեանի եւ Հ. Սահակ Ճեմճեմեանի կողմէ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միջօրեանի վեներալի» ութհատորեայ ձեռագրացուցակում, որն արարեանց ի վեներալի ութհատորեայ ձեռագրացուցակում, որն արարեանց է ուսումնասիրողի եւ ձեռագրերի միջեւ կապը, զգապահովում է ուսումնասիրողի եւ ձեռագրերի մասին անհրաժեշտ տեղեկութեան որոնումը կամ եղած տեղեկութիւններով որեւէ աղբիւր գտնելը:

4 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միջօրեանի վեներալի, հտ. Դ., Հ. Ս. ՃԵՄՃԵՄԵԱՆ, (կզմ.), Ս. Ղազար, Վեներալի 1993, էջ Բ-Ձ:  
5 Գ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ, Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածունները (Ժողովման պատմութեան համառոտ ուրուագիծ), «Բանբեր Մատենադարանի», 2023, թիւ 35, էջ 5-31:



են ներկայացնում<sup>13</sup>: *Ինչպէս Հ. Տաճատ Եարտըմեանն է նշում. «Բազմավէպը իր առաջին ֆայլերը առաւ՝ ժողովուրդին հետ ֆայլելով: Սակայն, տարիէ տարի կը զգացուի արդէն նոր էջերուն մէջ փոփոխութիւններ, նիւթերու ընտրութեան ու մշակումի բարելաւում՝ հետեւելով ժամանակի ֆաղափական, ընկերային ու մշակութային իրադարձութիւններով յատկանշուած ընդհանուր շարժումներուն եւ իր հետ այժմէացնելու կամ բարձրացնելու նաեւ ընթերցող ժողովուրդը»<sup>14</sup>:*

*Խմբագիրների ծրագրերը, նոր քաղաքականութիւնը, այդ փոփոխութիւններն ի վերջոյ 1870ականներին յանգեցնում են «Բազմավէպ»ի՝ ազգային, հոգեւոր ու բանասիրական ուղղուածութեան վերջնական ձեւաւորմանը՝ բնական գիտութիւնների, տնտեսական ու զանազան տեղեկատուական նիւթերի հրապարակման աստիճանաբար դադարեցմամբ. «Նախնական Բազմավէպներու գիտական ու կրթական տիրող ուղեգիծը՝ կը փոխուի աւելի բանասիրական ու կրօնական-հոգեւոր կամ եկեղեցապատմական հարցերու, անշուշտ ազգային մատենագրութեան, լեզուաբանութեան եւ պատմութեան խնդիրները շօշափելու առաւելագոյն չափերով, առանց գուտ մասնագիտական թերթի մը ցամաք չորութիւնը եւ միակերպութիւնը առնելու»<sup>15</sup>:*

*Այս մասին հաղորդում է նաեւ 1873 թուականի առաջին համարի խմբագրականը. «Ըստ այսմ մեծ հետաքրքրութեան եւ գոհութեան նիւթ է մարդուս՝ եւ մանաւանդ կիրթ անձի մը համար, նորանոր ծանօթութիւններ ստանալ ներկայ եւ անցեալ դարուց վրայ, եւ գիծն եւ զնոր մէկմէկու հետ կշռադատել. եւ առ այս ահաւասիկ մեծապէս նպաստամտոյց է պատմութիւն՝ վաւերացեալն բիր բետազօտութեամբ ստոյգ ուսումն եւ հմտութիւն սիրող գրագիտաց. եւ առ պատմութիւն դիրքիչ եւ յորդորիչ պարբերական ուսումնական հրատարակութիւնք, ինչպէս որ կան բիրաւորք յԵրոպէ, որք ֆաղեն ամենայն հմուտ քանապարհորդաց եւ բանասիրաց տուած ծանօթութիւնք»<sup>16</sup>:*

13 Պ. ՅԱՎՈՒԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 192-195: Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ, անդ: Լ. ԽԱԶԱՏՐԵԱՆ, նշ. աշխ., 2012, էջ 9, 16-17: ԱՆՊ, 2019, էջ 8-10:  
14 Հ. ՏԱՐՏԵՄԵԱՆ, նշ. աշխ., 2000, էջ 52-53:  
15 Նոյն, 53:  
16 «Բազմավէպ», 31 (1873), թիւ 1, էջ 4:

*Բնականաբար ազգային արժէքների, բանասիրական յօդուածների ու քննութիւնների հետ մի կողմից, գիտութեան մէջ հայերէն ձեւագրերի վերաբերեալ աճող հետաքրքրութեան պայմաններում միւս կողմից սկսում է նաեւ հայերէն ձեւագրերի մասին նիւթերի առաւել մեծ չափով տպագրումը: ԺԹ. դարի համարներում մենք հաշուել, քննել ենք ձեւագրական մինչեւ 20 յօդուած ու հրապարակում, որոնցից իւրաքանչիւրը, որեւէ առումով գիտական նորոյթ ու նոր խօսք էր<sup>17</sup>:*

*Ի. եւ ԻԱ. դարերի համարներում անհամեմատ աճում են ձեւագրական յօդուածների քանակը. ընդ որում «Բազմավէպ»ը էջեր է յատկացնում ինչպէս Միաբանութեան հաւաքածոյի ձեւագրերի մասին նիւթերին, այնպէս էլ այլ հաւաքածուների կամ անհատների մօտ գտնուող մատենաներին, իսկ այս նիւթերի հեղինակները ինչպէս Մխիթարեան հայրերն էին, այնպէս էլ տարբեր ուսումնասիրողներ ու գիտնականներ<sup>18</sup>:*

*Այսօր «Բազմավէպ»ի էջերում տպագրուած ձեւագրական հայերէն ձեւագրերին այս կամ այն կերպ առնչուող յօդուածների քանակը 130ից աւելի է (չհաշուած յօդուածաշարերի մէջ մտնող մասերը):*

*Այս յօդուածները, ըստ ընդհանրական նպատակի ու նրանցում ներկայացուած ձեւագրերի պահուելու վայրի, կարելի է ներկայացնել հետեւեալ խմբերով՝*

- ա.- վենետիկի Մխիթարեան միաբանութեան ձեւագրերը ներկայացնող յօդուածներ:*
- բ.- Միաբանութիւնից դուրս, այլեւայլ վայրերում գտնուող հայերէն ձեւագրական հաւաքածուներ կամ ձեւագիր (ձեւագրեր) ներկայացնող (այստեղ առանձին խմբով կարելի է նշել նորայայտ ձեւագրերի մասին հրապարակումները):*

17 Այս մասին մանրամասն տե՛ս Բ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ – Տ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, *Armenian manuscript-related articles in the pages of the “Bazmavep” in the 19th century*, «Review of Armenian Studies», 35 (2024), թիւ 2, էջ 63-80:  
18 Այս առումով «Բազմավէպ»ը դեռեւս 1850ականներից ունեցել է բաց ֆաղափականութիւն. «...Հ. Ղ. Ալիշանի (1849-1851), Հ. Հ. Պապիկեանի (1856-1857 եւ 1876-1878) եւ Հ. Յակոբոս Իսապետեանի (1871-1872) խմբագրութեան տարիներէն սկսեալ, «Բազմավէպ»ը «հիւրաբար» սկսաւ էջեր տրամադրել նաեւ հայ մտաւորականութեան, ամենատարբեր մարգերու ներկայացուցիչներուն», տե՛ս Հ. ՏԱՐՏԵՄԵԱՆ, նշ. աշխ., էջ 53:

դ.- Որեւէ խնդրի առնչութեամբ ձեռագրերի անդրադարձող:

դ.- Այլ հանդէսներէ, պարբերականներէ, ձեռագրերի մասին տեղեկութիւն պարունակող հրատարակումների արտատպութիւն կամ վերաշարադրանք,

ե.- Ձեռագրացուցակների մասին տեղեկութիւններ կամ գըրախօսութիւններ:

Այս յօդուածներն ու հրատարակումները տարբեր են իրենց խնդիրներով ու առաջնահերթութիւններով, նրանցից իւրաքանչիւրն ունի իր գիտական կարեւորութիւնն ու արժէքը: Մեր քըննութեան առարկան «Բազմավէպ»ի այն յօդուածներն ու հրատարակումներն են, որոնք ունեն աղբիւրագիտական արժէք, այսինքն՝ տպագրութեան պահից սկսած որոշ ժամանակ եղել են հրատարակուած եզակի աղբիւր ձեռագրի մասին: Ուսումնասիրութեան համար մենք նախ առանձնացրել ենք «Բազմավէպ»ի բոլոր յօդուածները, որոնք որեւէ կերպ առնչուած են ձեռագրերին: Քանի որ մինչ օրս տպագրուած չէ «Բազմավէպ»ի ամբողջական մատենագիտութիւնը (կայ միայն առաջին 50 տարուայ հատորների բովանդակութիւնը ներկայացնող ցանկ-մատենագիտութիւնը եւ տարբեր մատենագիտութիւններում որոշ յղումներ), ուստի յօդուածների առանձնացման համար ստուգել ենք հանդէսի իւրաքանչիւր համար՝ ցանկերով ու ըստ հարկի յօդուածը կարգալով, եթէ վերնագրից անհասկանալի էր յօդուածի բովանդակութիւնը:

Նոյնականացրել ենք յօդուածներում եղած ձեռագրերը. հնարաւորինս որոշել ենք այժմ որ հաւաքածուի որ ձեռագրի մասին է խօսքը, եթէ յօդուածում դրա մասին նշում չկար, ստուգել ենք այդ մատենաների նկարագրութիւնների առկայութիւնը համապատասխան ձեռագրացուցակներում: Չլինելու պարագայում դրանք առանձնացրել ենք, հնարաւորինս պարզել դրանց մասին այլ աղբիւրները ու համոզուելու դէպքում, որ «Բազմավէպ»ի յօդուածը միակ կամ լիարժէք աղբիւրն է մինչ օրս, ցանկագրել:

Փաստօրէն, առանձնացուած յօդուածներն ու հրատարակումներն այս կամ այն ձեռագրի մասին այժմ յայտնի միակ տեղեկութիւնները, իսկ երբեմն եւ ամբողջական նկարագրութիւններն են, որով կարեւոր են ոչ միայն ընդհանրապէս հայերէն ձեռագրագիտութեան, ձեռագրերի պատմութեան, աղբիւրագիտութեան համար, այլեւ ձեռագրով ուսումնասիրութիւն կատարող ցանկացած հետազօտողի համար՝ լինի պատմաբան, գրականագէտ, աստուածաբան թէ բնագրագէտ:

«ԲԱԶՄԱՎԵՊ»Ի ԱՂԲԻՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

«Բազմավէպ»ում տպագրուած, հայերէն ձեռագրերին վերաբերող յօդուածների աղբիւրագիտական նշանակութիւնը պէտք է դիտարկել երկու կտրուածքով՝ տպագրուելու պահին եւ ներկայումս:

Տպագրելու պահին եւ դրանից յետոյ որոշ ժամանակ աղբիւրագիտական արժէք ունէին այն յօդուածները, որոնք պարունակում էին կամ դեռեւս չցուցակագրուած, կամ նոր գտնուած եւ այլ աղբիւրներով չներկայացուած ձեռագրերի մասին տեղեկութիւններ: Սակայն այն պահից սկսած, երբ տպագրուած է այդ ձեռագրի նկարագրութեամբ ձեռագրացուցակ կամ լիարժէք նկարագրութեամբ այլ ուսումնասիրութիւն, տուեալ յօդուածը դադարում է ունենալ այն նոյն կարեւոր աղբիւրագիտական արժէքը, ինչը հրատարակման պահին էր: Օրինակ, երբ «Բազմավէպ»ի 1891 թուականի համարներում տպագրուած է «Յուցակ հայերէն գրչագրաց Մատենադարանի ուխտին Մխիթարայ»<sup>19</sup> յօդուածաշարը (49 (1891), 2, էջ 33-40, 3, էջ 65-69, 4, էջ 97-100, 5, էջ 129-137, 8, էջ 209-214), դեռեւս տպագրուած չէր Վենետիկի ձեռագրացուցակի առաջին հատորը<sup>20</sup>: Թէեւ յօդուածն ընդամենը մի քանի ձեռագրի նկարագրութիւն է<sup>21</sup>, իսկ Միաբանութեան մատենադարանում էլ 1791-1792 թուականից կար Հ. Մկրտիչ Աւգերեանի կազմած, յետագայում իր անունով «Աւգերեան ցուցակ» կոչուած ներքին գործածութեան մի անտիպ ցուցակ<sup>22</sup>, այնուամենայնիւ յօդուածը դառնում է տպագրուած ու այդպիսով գիտական հան-

19 Յօդուածաշարը անստորագիր է, որեւէ աղբիւրում մեզ չյաջողուեց գտնել հեղինակին, նկատի ունենալով, հետեւեալ տողերը՝ «Այս ցուցակը աւելի հետաքննական ընելու դիտաւորութեամբ, պէտք եղած ատեն նմանահան օրինակներ ալ պիտի դնենք ի հնագոյն եւ յընտրելագոյն գրչագրաց, եւ անոց որ պատմական կամ մատենագրական կարեւորութիւն մը ունին. ինչպէս ջանացր եմք ընել «Շիրակ», «Միսուան», «Այրարատ» եւ հիմա տպագրութեան ընթացքի մէջ եղող «Միսական» երկասիրութեան մէջ» (49 (1891), էջ 34), կարծում եմք՝ հեղինակը Հ. Ղեւոնդ Ալիշանն է:  
20 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ, հտ. Ա., Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, (կզմ.), Ս. Ղազար, Վենետիկ 1914:  
21 Տրուած են Վնտ. 1508 (ցուցակի 1), 841 (ցուցակի 5), 1006 (ցուցակի 6), 1007 (ցուցակի 12), 935 (ցուցակի 8) Աստուածաշունչ մատենաների նկարագրութիւնները:  
22 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ, հտ. Զ., Հ. Ս. ՃՄՏՃՄՏԱՆ, (կզմ.), Ս. Ղազար, Վենետիկ 1996, էջ Բ.-ԺԵ.:

րութեան համար առաւել հասանելի նկարագրութիւնները միակ աղբիւրը մինչեւ Հ. Բարսեղ Սարգիսեանի կազմած ձեռագրացուցակի Ա. հատորի տպագրութիւնը՝ 1914 թուական:

Նոյն կերպ տպագրութեան պահին միակ աղբիւր է եղել Նիկողայոս Քարամեանցի կազմած «Ցուցակ Պետլինի արքայական Մատենադարանի հայ ձեռագրաց»ը (44 (1886), 3, էջ 183-192), որ Հ. Ղեւոնդ Ալիշանի յորդորով պատրաստած հայերէն 94 ձեռագրերի համառօտ նկարագրութիւնն է: Բեռլինի արքայական գրադարանի հայերէն ձեռագրերի նկարագրութիւնները մինչ այդ որեւէ այլ տեղ հրատարակուած չէին, անգամ օտարալեզու աղբիւրներում<sup>23</sup>: Երկու տարի անց՝ 1888 թուականին, այն տպագրուած է նաեւ առանձին գրքով<sup>24</sup>:

1923 թուականի Յունուարից «Բազմավէպ»ում սկսուած է տպագրուել բժիշկ Վահրամ Թորգոմեանի յօդուածաշարը «Հայ Բժշկական ձեռագիրք Ա. Ղազարու վանքին»<sup>25</sup>, որ «Բազմավէպ»ի խումբագրութիւնն այսպէս է գնահատում. «Յարգելի Տոքթ. Վահր. Թորգոմեան Քաղաքի մէջ իր բնակութեան պարագայէն օգտուելով միանգամայն արդիւնագործելու դիտմամբ իր ժամերը յօգուտ Հայ Բանասիրութեան՝ կատարեց «ԲԱԶՄԱՎԷՊ»ի համար՝ Մայրավանքի բժշկական ձեռագրաց մասին ուսումնասիրութիւն մը...» (80 (1923), 1, էջ 7): Մխիթարեան միաբանութեան ձեռագրական հաւաքածոյի Բժշկարանները ներկայացնող Ը. հատորը տպագրուել է միայն 1998 թուականին<sup>26</sup>:

23 B. COULIE, 62. աշխ., էջ 67-70:  
24 N. KARAMIANZ, Die Handschriften-Verzeichnisse der Koniglichen Bibliothek zu Berlin, A. ASHER&Co, Berlin, 1888.  
25 «Բազմավէպ», 80 (1923), թիւ 1, էջ 7-11, թիւ 2, էջ 39-43, թիւ 3, էջ 69-71, թիւ 4, էջ 104-107, թիւ 5, էջ 138-142, թիւ 6, էջ 167-169, թիւ 7, էջ 204-206, թիւ 8, էջ 229-230, թիւ 10, էջ 301-303, թիւ 11, էջ 328-331, «Բազմավէպ», 81 (1924), թիւ 1, էջ 10-11, թիւ 2, էջ 41-44, թիւ 3, էջ 74-77, թիւ 5, էջ 169-173, թիւ 6, էջ 207-208, թիւ 7, էջ 232-233, թիւ 8, էջ 263-266), թիւ 9, էջ 302-305, թիւ 10, էջ 335-338, թիւ 11, էջ 356-359, թիւ 12, էջ 386-389, «Բազմավէպ», 82 (1925), թիւ 2, էջ 38-39, թիւ 3, էջ 70-72, թիւ 4, էջ 104-107, թիւ 5, էջ 134-137, թիւ 6, էջ 167-170, թիւ 8, էջ 229-231, թիւ 10, էջ 292-294, «Բազմավէպ», 83 (1926), թիւ 2, էջ 43-46, թիւ 3, էջ 67-69, թիւ 5, էջ 134-139, թիւ 6, էջ 166-169, թիւ 9, էջ 266-269:  
26 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանցի վեցերորդ, հտ. Ը., Հ. Ա. ՃԵՄՃԵՄԵԱՆ, (կզմ.), Ա. Ղազար, Վեցերորդ 1998 (այսուհետ՝ Վեցերորդի ցուցակ, հտ. Ը.):

Մխիթարեան միաբանութեան ձեռագրերի՝ մինչեւ ձեռագրացուցակների տպագրումը «Բազմավէպ»ում ներկայացման օրինակներ շատ կան, ինչպէս Ո. Կ. ստորագրութեամբ հրատարակուած «Բ. Տաղարան Ա. Ղազարու վանք» (1924, 12, էջ 385-386) եւ «Զեռագիր Ա. Դ. 1225» (1925, 9, էջ 257-258) յօդուածները համապատասխանաբար Վենետիկի Միաբանութեան մատենադարանի հմր 556 Տաղարանի եւ հմր 1325<sup>27</sup> ձեռագրի մասին: Երկուսի պարագայում էլ դեռեւս տպագրուած չէին ձեռագրացուցակի համապատասխան հատորները՝ հմր 556-ի նկարագրութիւնը տպագրուել է ձեռագրացուցակի Ե. հատորում<sup>28</sup>, 1995 թուականին, հմր 1325ը՝ Զ. հատորում<sup>29</sup>, 1996ին: Հետաքրքիր է որ երկու դէպքում էլ յիշուած է ձեռագրատան ձեռագրացուցակը. «Այս նկատմամբ մեր ձեռագրացուցակը (էջ 561) կ'ըսէ...» (1924, 12, էջ 385) եւ «Վանատան Զեռագրացուցակին մէջ նշանակուած է երես 29...» (1925, 9, էջ 257), որ թերեւս մատենադարանի անտիպ, վերը յիշուած «Աւգերեան ցուցակ»ն է:

Մխիթարեան միաբանութեան այդ պահին դեռեւս ձեռագրացուցակով չհրատարակուած մէկ այլ ձեռագիր է ներկայացուած Հ. Եղիա Փէչիկեանի «Զուղայեցի Անտոն Դպրի պատմական յիշատակարան մը» (40 (1932), 12, էջ 536-542) յօդուածում: Զեռագիրը Վենետիկի հմր 872ն է, որի նկարագրութիւնը ձեռագրացուցակում տպուել է 1995 թուականին<sup>30</sup>:

Բնական է, որ «Բազմավէպ»ը էջեր էր տրամադրում նախ եւ առաջ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան ձեռագրերի ներկայացման ու հանրայնացման համար: Բայց «Բազմավէպ»ում ոչ պակաս քանակի, աղբիւրի արժէքով յօդուածներ կան նաեւ այլ հաւաքածոների ու անհատների ձեռագրերի մասին, որի օրինակներից մէկը վերը արդէն քննուած Բեռլինի գրադարանի հայերէն ձեռագրերի ցուցակն էր, որի կազմման հարցում, ինչ խօսք, վճռորոշ էր Հ. Ղեւոնդ Ալիշանի յորդոր-առաջադրանքը: Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնից դուրս գտնուող ձեռագրի՝

27 Յօդուածում թերեւս շփոթ կայ 1225-ի փոխարէն պետք է լինի 1325:  
28 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանցի վեցերորդ, հտ. Ե., Հ. Ա. ՃԵՄՃԵՄԵԱՆ, (կզմ.), Ա. Ղազար, Վեցերորդ 1995, էջ 805-812 (այսուհետ՝ Վեցերորդի ցուցակ, հտ. Ե.):  
29 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանցի վեցերորդ, հտ. Ե., Հ. Ա. ՃԵՄՃԵՄԵԱՆ, (կզմ.), Ա. Ղազար, Վեցերորդ 1996, էջ 443-446:  
30 Վեցերորդի ցուցակ, հտ. Ե., էջ 767-786:

«Բագմավէպ»ում ներկայացման օրինակ է Ս. Մելիք-Յակոբեանի «Ս. Ամենափրկչեան մատենադարան գրչագիր հմր 36 Աւետարան»ը 1924 թուականի Հոկտեմբերի համարում (էջ 325-329)՝ ձեռագրի մանրամասն նկարագրութեամբ ու յիշատակարաններով: Այս ձեռագրի նկարագրութիւնը պարունակող ձեռագրացուցակը տպագրուել է 1970 թուականին<sup>31</sup>, թէեւ Սմբատ Տէր-Աւետիսեանը դեռեւս 1902 Յունիս-Սեպտեմբեր ամիսներին է կազմել ցուցակի նախնական տարբերակը<sup>32</sup>: Ամէն դէպքում ստացւում է, որ «Բագմավէպ»ի յօդուածը մի քանի տասնամեակ եղել է տպագրուած միակ լիարժէք աղբիւրը, ընդ որում՝ ձեռագրի յետագայի յիշատակարաններից մէկը, որ բերուած է յօդուածում, ձեռագրացուցակում չկայ: Ուստի հայերէն ձեռագրերի Ժէ. դարի յիշատակարանների ժողովածուն այդ յիշատակարանը վերցրել է այս յօդուածից<sup>33</sup>: Ստացւում է, որ լինում են դէպքեր, երբ անգամ ձեռագրացուցակի առկայութեան պարագայում յօդուածը մասամբ պահպանում է իր կարեւորութիւնը:

Նոր-Ջուղայում պահուող մէկ այլ ձեռագրի է վերաբերում Իրազեկի (Յ. Տէր-Յակոբեան)<sup>34</sup> տպագրած «Ագաթանգեղոս եւ Եղիշէ (ձեռագիր)» նիւթը՝ (89 (1931), 6, էջ 265-267): Ի տարբերութիւն նախորդի՝ ներկայացուած ձեռագիրը պատկանում է ոչ թէ վանքի հաւաքածուին, այլ մասնաւոր սեփականութիւն է: Այն յետագայում ներառուել է «Յուցակ ձեռագրաց նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի» ձեռագրացուցակում՝ տպագրուած 1972 թուականին, դարձեալ իբրեւ մասնաւոր անձի՝ Նորայր Տէր-Պողոսեանին սեփականութիւն<sup>35</sup>:

Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցում պահուող մի ձեռագրի նկարագրութիւնն է Արտաւազդ Եպիսկոպոս Սիւրմէեանը տպագրել «Բագմավէպ»ի 1933 թուականի Ապրիլի համարում՝

31 Տե՛ս Յուցակ Հայերէն ձեռագրաց նոր Ջուղայի Ամենափրկչի վանքի, հտ. Ա., Ս. ՏԵՐ-ԱՒԵՏԻՍԵԱՆ, (կզմ.), Միֆարեան տպ., Վիեննա 1970: Ձեռագրիս նկարագրութիւնը տե՛ս էջ 205-208:  
 32 Անդ, էջ Ե-Զ:  
 33 Հայերէն ձեռագրերի Ժէ. դարի յիշատակարաններ (1620-1640), հտ. Բ, Վ. ՅԱՎՈՐԵԱՆ – Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, (կզմ.), Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի հրտ., Երևան 1978, էջ 277 (այսուհետ՝ Ժէ. դ. յիշ-Բ, Բ.):  
 34 Տե՛ս Բ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, Հայոց ծածկանունների բառարան, Երևանի համալսարանի հրտ., Երևան 2005, էջ 182:  
 35 Յուցակ ձեռագրաց նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքաց քանդակարանի, հտ. Բ., Լ. ՄԻՆԱՍԵԱՆ, (կզմ.), Օ. ԵԳԱՆԵԱՆ, (խմբ.), Միֆարեան տպ., Վիեննա 1972, էջ 190-191:

«Ձեռագիր հին Աւետարանի մը հանդիսաւոր բեմադրութիւնը» (էջ 154-158)<sup>36</sup>: Նոյն նկարագրութիւնը արդէն ձեռագրացուցակով տրպագրուել է 1935 թուականին<sup>37</sup>:

Կ. Պօլսի արուարձաններից Խարթալի կամ Քարթալի Սուրբ Նշան եկեղեցում պահուող Աւետարանի մասին է Հ. Վահան Յովհաննէսեանի «Խարթալի Աւետարանը» հրատարակումը (119 (1961), 1-2, էջ 18-20)՝ գրչութեան մասին տեղեկութիւններով եւ գլխաւոր յիշատակարանով: 1966 թուականին «Հանդէս ամսօրեայ»ում Հ. Համազասպ Ոսկեանը տալիս է այս եւ եկեղեցում պահուող եւս 3 ձեռագրի առաւել մանրամասն նկարագրութիւնները (Հանդէս ամսօրեայ, 80 (1966), 7-9, էջ 321-338), որոնք էլ ապա վերատպում է «Յուցակ ձեռագրաց, որ ի Հանդէս ամսօրեայ»ում<sup>38</sup>:

«Բագմավէպ»ում բաւականին շատ են բանասէր-հաւաքորդ Յարութիւն Քիւրտեանի<sup>39</sup> հրատարակումները սեփական հաւաքածուի ձեռագրերի մասին, որոնք հիմնականում նորութիւն էին ու աղբիւրագիտական արժէք ունեն մինչ օրս, օրինակ՝ «Նորագիւտ օրինակ մը «Անսիգ Անտիոքոյ» օրինագրքին» (114 (1956), 1-2, էջ 15-21), «Վարդան վրդ. Սյգեկցիի գործերուն մէկ ձեռագիրը 1339էն, Քիւրտեան հաւաքածոյի մէջ» (115 (1957), 5-6, էջ 122-129), «Քիւրտեան հաւաքածոյի թիւ 11 Ոսկեփորիկը (Ժէ. դարէն)» (117 (1959), 3-5, էջ 92-97), «Մարտիրոս Ղրիմեցիի տաղերուն Քիւրտեան հաւաքածոյի օրինակը» (118 (1960), 3-4, էջ 65-71), «Բուսարանական հին գրչագրի մը հատուկտորներ» (119 (1961), 11-12, էջ 265-267) եւ այլն<sup>40</sup>:

36 «Սիօն»ի 1933, հմր 1-ի էջ 25-ում ծանուցում կայ Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցու երկրորդ շինութեան 300ամեայ յոբելեանի առիթով ընթացող հանդիսութիւնների, պատարագի ու այդ առիթով դուրս բերուած այս նշանաւոր Աւետարանի մասին, սակայն, ի տարբերութիւն «Բագմավէպ»ի յօդուածի, այնտեղ ձեռագրի նկարագրութիւն չկայ, այլ միայն որոշ տեղեկութիւններ:  
 37 Տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցոյ եւ մասնաւորաց, Ա. ՍԻՐՄԵՏԵԱՆ, (կզմ.) Տպարան Սրբոյ Յակոբեանց, Երուսաղէմ 1935, էջ 1-3:  
 38 Տե՛ս Յուցակ ձեռագրաց որ ի Հանդէս ամսօրեայ, Հ. Հ. ՈՍԿԵԱՆ, (խմբ.), Միֆարեան տպ., Վիեննա 1976, էջ 39:  
 39 Յարութիւն Քիւրտեանի մասին տե՛ս Հ. Ն. ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ, Բանասէր եւ հնագէտ Յարութիւն Քիւրտեանի յիշատակին, «Բագմավէպ», 137 (1979), թիւ 1-4, էջ 408-411:  
 40 Յարութիւն Քիւրտեանի յօդուածները ներկայացնում ենք մեր ֆննութեան այս բաժնում՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ ընթացքի մէջ է

1968 թուականին Յարութիւն Քիւրտեանը «Բազմավէպ»ում (126, 1-2, էջ 37-44, 3-4, էջ 108-115) հրապարակում է Ղալաթիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու ձեռագրերի՝ Հ. Արսէն Ղազիկեանի 1920 թուականին կազմած համառօտ ցուցակը, որ Քիւրտեանը գնել էր Կ. Պօլսում զանազան գրութիւնների ու ձեռագիր տետրակների հետ: Մէկ տարի անց «Բազմավէպ»ի այս հրապարակումը տպագրւում է իբրեւ առանձին ձեռագրացուցակ<sup>41</sup>:

Բերուած օրինակներում, որոշ ժամանակից յետոյ յօդուածները դադարել են լինել ձեռագրերի մասին միակ կամ լիարժէք աղբիւր, բայց դա բնաւ չի նսեմացնում այն դերը, որ նրանք ունեցել են տպագրութեան ժամանակ կամ դրանից յետոյ մինչեւ որոշակի պահ: Կարելի է եզրակացնել, որ սրանք առաւելապէս մինչեւ տարբեր ձեռագրացուցակների հրատարակութիւնը տպագրուած յօդուածներն են:

Ի հակադրութիւն սրան՝ կան մի խումբ յօդուածներ էլ, որոնք այս առումով պահել են իրենց աղբիւրագիտական արժէքը մինչ օրս: Մեր ուսումնասիրութեան ընթացքում, ինչպէս վերը նշել ենք արդէն, որոշակի քննութիւնից ու ստուգում-ճշտումներից յետոյ, առանձնացրել ենք ձեռագրերի մասին եզակի տեղեկութիւններով այդ յօդուածները: Նկատի ունենալով նրանց կարեւորութիւնը եւ ցանկանալով օգնել ուսումնասիրողներին՝ հեշտօրէն գտնելու՝ նպատակայարմար գտանք ստորեւ բերել բոլոր այդ յօդուածների մասին տեղեկութիւնները՝ յօդուածի հեղինակ-վերնագիր-տպագրութեան տարի-համար-էջ-ձեռագիր-տեղեկութիւնի հերթականութեամբ:

հաւաքածոյի՝ Քիւրտեանի սկսած, սպա Երեւանի Մատենադարանի գլխաւոր աւանդապահ, պ. գ. դ. Գեորգ Տէր-Վարդանեանի շարունակած ձեռագրացուցակի կազմութիւնը: Մանրամասն տե՛ս Գ. Տէր-Վ. ԱՐԴԱՆԵԱՆ, Միֆթարեանց վեցնտիկի Մատենադարանի «Յարութիւն Քիւրտեան հաւաքածոն» (ընդհանուր տեսութիւն եւ գնահատութիւն), «Բազմավէպ», 176 (2018), թիւ 1-2, էջ 311-330:

41 Տե՛ս Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ, Համառօտ ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, Յ. ՔԻՒՐՏԵԱՆ, (հրտ.), Ս. ՂԱԳԱՐ, Վեցնտիկ 1969:

ԹՕԴՈՒՄԻ ԶԵՂԻՆԱԿ	Վերնագիր	ԹՈՒԱԿԱՆ	ՀԱՄԱՐ	Էջ	ԶԵՌԱԳԻՐ	ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ
Հ. Մկրտիչ Պոտուրեան	Առաքել Սիւնեցւոյ նորագիւտ տաղեր	1909	8	359-360	Տաղարան (Պարտիզակում Սըլըեան Միւսա էֆենդու մօտ)	1659, 1690, գրիչ՝ Թուխման սրկ., Աստուածատուր, ստացող՝ Աստուածատուր
Մեսրոպ Յ. Սէքեանց	Հայ ձեռագիր դուրան մի ի հնդիկս	1924	5, 6	166-169, 204-207	Ղուրան (Հնդկաստանի Բօպլա քաղաքի գրադարանում)	Ժէ. դարի կէսեր
Տօթ. վահրամ Յ. Թորգոմեան	Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքից	1924	8	263-266	Վնտ. 891 Դեղորայք	
		1924	9	302-305	Վնտ. 1375 Բժշկարան	
		1924	11	356-359	Վնտ. 1794 Ապուսայիդ, Մարդակագմութիւն	
		1924	12	386-389	Ամիրդովլաք Ամասիացի, Հատուած Անգիտաց Անպետէ (Վնտ. «Խմբագիրք» 61, հմր 6)	
		1925	2	38-39	Բժշկարան (Վնտ. «Խմբագիրք» 61, հմր 5)	
		1925	3	70-72	Բժշկարան, (Վահրամ Յ. Թորգոմեանի սեփական.)	
		1925	4	104-107	Վնտ. 407 Գիրք արուեստի ֆիլիական, Քաղուած ֆիլիագործութեան (Վնտ. «Խմբագիրք» 1527, հմր 8)	

		1925	5	134-137	Վնտ. 1355 ձեռագրի ընթացակարգը <sup>42</sup>	
		1925	8	229-231	Բժշկարաններ ի 5 պատահիկ վեցնեցիկում	
		1926	3	67-69	Վնտ. 1442 տանկերեն Բժշկարան	
		1926	5	134-139	Բնագնործին (Վնտ. «Խմբագիրք» 247, հմր 9)	
Հայկ Անեմեան	Հայ ձեռագիր վր. Հայր Մաշտոց	1927	5	142-144	Հայր Մաշտոց <sup>43</sup>	1671, Կ. Պոլիս (Սուրբ Աստուածածին), գրիչ և ծաղկող՝ Աստուածատուր երեց, ստացող՝ Ագուլեցի Թումանյանից Հախումի որդի խոնայ Բունիսթ
Հ. Վահան Յովհաննիս- սեան	Մագաղա- թեայ Աւետա- րան վր	1950	11- 12	271-274	Աւետարան <sup>44</sup>	1441, Սանահին <sup>45</sup>

42 Այս ձեռագրի նկարագրությունը կայ ձեռագրացուցակում, սակայն այն-  
տեղ բացակայում է յոդուածում բերուած յիշատակարանը՝ կարնոյ Ս.  
Ստեփանոս եկեղեցու պատմութեամբ: Տե՛ս Վեցնեցիկի ցուցակ, հտ. Ը.,  
էջ 734-740:

43 Ըստ յոդուածի տեղեկութիւնների՝ Թարիզեցի պարոն Անդր Գուլմա-  
սեանը 1927 թուականից ոչ շատ վաղ Ատրպատականի առաջնորդ գեր-  
տեր Ներսէս արքեպ. Մելիք-Թանգեանին է յանձնել ձեռագիրը՝ խնդրելով,  
որ իր կողմից նուէր ուղարկուի Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Առաջնորդի  
թոյլտուութեամբ Հայկ Անեմեանը ուսումնասիրել է ձեռագիրը և յո-  
դուած պատրաստել «Բազմավէպ»ի համար: Մեզ չյաջողուեց ձեռագիրը  
գտնել ո՛չ էջմիածնի ձեռագրերի հրատարակուած նկարագրութիւննե-  
րում, ոչ էլ այլ աղբիւրներում:

44 Յոդուածագիրը ձեռագիրը տեսել է սիրիացի կաթողիկէ ոմն Գեորգ  
Մուսալիէի մօտ, ով ցանկացել է ճշտել մատեանի գրչութեան թուականը  
և արժէքը, քանի որ պէտք է վաճառէր Ամերիկա մեկնող մի հալէպցու:

45 1441 թուականին այս յիշատակարանը չկայ Լեւոն Խաչիկեանի կազմած  
«Ժ. զարի հայերեն ձեռագրերի յիշատակարաններ» ժողովածուում (հտ.  
Ա., ՀՍՍՌ ԳԱ հրտ., Երևան, 1955), իսկ յետագայի յիշատակարաններից  
մէկը՝ 1651 թուականին կայ Ժ. զարի յիշատակարանների ժողովածու-  
ում (Տե՛ս Հայերեն ձեռագրերի Ժ. զարի յիշատակարաններ (1664-1660),  
հտ. Գ., Վ. ՅԱՎՈՒԵԱՆ, (կզմ.), ՀՍՍՌ ԳԱ հրտ., Երևան 1984, էջ 467, հմր  
742), ընդ որում, վերցուած է «Բազմավէպ»ի այս յոդուածից:

Հ. Քերովրտ Վ. Զրաբեան	Աւետա- րանի երկու նոր ձեռագիր- ներ	1950	11- 12	277-278	Վնտ. 1987 Աւետարան <sup>46</sup>	1671, Կ. Պոլիս, գրիչ և ծաղկող՝ Մարկոս վարպետ, մեկնասա՝ վանեցի խօջայ Պողոս, ստացող՝ Սուրբ Վարդան Զօրավար եկեղեցի:
					Վնտ. 1988 Աւետարան	
Արամ Երեմեան	Ժ. զարի մի նոր գրչագիր Աւետա- րան	1952	5-6	121-123	Աւետարան <sup>47</sup>	1640, Սպահան, գրիչ՝ Յովսէփ և Սարուխան սրկւ-բ, ստացող՝ տէր Հայրապետ
Արամ Երեմեան	Ժ. զարի մի նոր ձեռագիր Աւետա- րան	1952	10- 12	243-245	Աւետարան <sup>48</sup>	1459, Շատուան գիւղ
Արամ Երեմեան	Մանրա- նկարիչ Յովհաննիս ֆա- հանայ (Ժ. զար)	1956	6-8	163-169	Աւետարան <sup>49</sup>	1417, Խիզան, գրիչ և ծաղկող՝ Յովհաննէս:

46 Այս և յաջորդ Աւետարանները Միաբանութեան թանգարանին է նուիրել  
Պողոս Խաչեմեանը 1950 թուականին, և բնականաբար այս ձեռագրերի  
նկարագրութիւնները չկան ձեռագրացուցակի Ա. հատորում:

47 Յոդուածի տեղեկութիւնների համաձայն՝ ձեռագիրս Ժ. զարում Նոր-  
Ջուղայից տարուել է Սպահանի Բուրարի գաւառի Շարաւա գիւղ, ուր  
288 տարի պահուել է Տէր-Յակոբեանց գերդաստանում: Այնուհետև 1928ին  
այս ազգատոհմը ձեռագիրը տանում է Քեազազ գաւառ, 1942ին Սուլ-  
թանաբադ, 1945ին Թեհրան, որտեղ էլ 1952 թուականին տեսել է Ա.  
Երեմեանը տիրացու Սերոբ Տէր-Յակոբեանի մօտ:  
Ձեռագրի յիշատակարանը այս յոդուածից է վերցուած յիշատակարաննե-  
րի ժողովածուի համար. Տե՛ս Ժ. զ. յիշ-բ, Բ., էջ 826-827:

48 Ձեռագիրը 1946ին Սպահանի Բուրարի գաւառի Գովզ գիւղից փոխա-  
դրուում է Թեհրան՝ Հէշմէդիէ թաղամաս, որտեղ էլ 1952ին տեսել է  
Արամ Երեմեանը: Ձեռագրի յիշատակարանը այս յոդուածից է վերցուած  
յիշատակարանների ժողովածուի համար. Տե՛ս Ժ. զարի հայերեն ձեռագ-  
րերի յիշատակարաններ, մասն երկրորդ, Լ. ԽԱՎՈՒԵԱՆ, (կզմ.), Հայկական  
ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի հրտ., Երևան 1958, էջ 124, հմր 164:

49 Արամ Երեմեանը ձեռագիրը տեսել է Սպահանի Քեազազ գաւառից Թեհ-  
րան գաղթած Մկրտում Յովհաննէսեանի մօտ և 1946ին «անձամբ ու-  
սումնասիրել»: Յիշատակարանը ներառուած չէ հայերեն ձեռագրերի Ժ. զ.  
զարի յիշատակարանների ժողովածուներում:

Արամ Երեմեան	Գրիչ եւ ծաղկող Յովհաննէս Սահնեցի (ԺԵ. դար)	1957	3-4	79-82	Աւետարան <sup>50</sup>	1418, Սանահին
Հ. Քերովրէ Ա. Զրաբեան	Յովհաննէսի Աւետարանի մի ձեռագրի բնագրային տարբերակները	1989,	1-4	340-353	Վնտ. 2050 Աւետարան <sup>51</sup>	1073, գրիչ՝ Դաւիթ, ստացող՝ Պատրիկ Բախտիար:
Մարտիրոս Մինասեան	Ս. Ղազարոս Մատենադարանին ամենափոքրիկ Աւետարանը	1962	6-8	164-166		
Արամ Երեմեան	Հնդկահայ մշակոյթը եւ ԺԹ. դարի մի անյայտ ձեռագիր տաղարան (17-20րդ դար)	1965	1-3, 8-10	24-33, 215-224	Տաղարան <sup>52</sup>	1824, Կալկաթա

50 Յիշատակարանը ներառուած է ԺԵ. դարի յիշատակարանների ժողովածուներում: Յօդուածում Արամ Երեմեանը յայտնում է. «Վաստակաւոր արուեստագէտից մինչեւ այժմ մեզ հասել են հինգ ձեռագրեր, որոնցից երկուսն առանձին խնամքով պահուում են Երեսանի Պետ. Մատենադարանի ձեռագրատանը, իսկ մէկը գտնուում է Սպահանի Զարմահայ գաւառի հայաբնակ վերին-Քօնարք գիւղում»: Գործածուած 5 ձեռագրից 4-ի տեղը յօդուածում կամ նշում է, կամ հնարաւոր է պարզել, միայն այս ձեռագրի գտնուելու վայրը կամ հաւաքուածում մեզ չյաջողուեց գտնել, ուստի կարծում ենք, որ սա է Սպահանի վերին-Քօնարք գիւղում եղածը:

51 Յիշատակարանը տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ Ե.-ԺԲ. դդ., Ա. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, (աշխտ.), Հայկական ՍՍՀ ԳԱ հրտ., Երեսան 1988, էջ 108, հմր 128, վերցուած է «Բազմավէպ»ի այս յօդուածից:

52 Ա. Երեմեանը ձեռագիրը տեսել է 1933 թուականին Նոր-Ջուղայում՝ «մի գրասէր հայի տան դարակում փոշիների տակ մնացած գրքերն ուսումնասիրելիս»:

Յ. Քիրտեան	Ջուղայեցի խօջայ Սաֆար ու խօջայ Նազար եւ իրենց գերդաստանը	1975	3-4	379-396	Յայսմաուրբ <sup>53</sup>	1604, Խիզան, մասնաւոր սեփականութիւն
Հ. Արիստակէս Մանուկեան	Գեորգ դպիր Տէր Յովհաննէսեանի ձեռագիրները Ս. Ղազարոս Մատենադարանին մէջ	1957	7-8	166-170		Վնտ. 1693, Վնտ. 1694, Վնտ. 474, Վնտ. 2960, Վնտ. 1811, Վնտ. 1532, Վնտ. 793 <sup>54</sup>
Հ. Սահակ Ճեմնեմեան	Գեորգ դպիր Տէր Յովհաննիսեան (Պալատեցի) եւ Միխայիլ Բեանները	1982,	1-2	96-155		
Նրտ. Արամ Անդրէասեան	Պոլսոյ Սկեւոյի աւետարանի յիշատակարանները	1968	4-6	էջ 116-119	Աւետարան <sup>55</sup>	1273, Սկեւոա, գրիչ՝ Ստեփանոս, պատուիրատու-ստացող՝ տէր Սիմէոն՝ առաջնորդ Սկեւոյի վանքի, ծաղկող՝ Յովասափ:

53 Յօդուածում բերուած յիշատակարանը մեզ չյաջողուեց գտնել ԺԵ. դարի յիշատակարանների ժողովածուում:

54 Այս ձեռագրի մասին տե՛ս նաեւ Բ. ԶՈՒԳՍՍՁԵԱՆ, Գեորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն 1737-1811, Գիւղ, Երեսան 1994, էջ 99-100: Տեղեկութիւնները վերցուած են Ա. Մանուկեանի այս յօդուածից:

55 «Իսթանպուլի «Թօփգարը» Պալատին Թանգարանի գրադարանի ոչ-մահմետական բաժնին մէջ, 122 թիւով արձանագրուած [...]» այս Աւետարանն Արամ Անդրէասեանն առաջին անգամ ներկայացրել է «Ժամանակ» օրաթերթի 2 Դեկտ. 1965 թուականի 18732 համարում լոյս տեսած «Վեց հայերէն ձեռագիր մատեններ «Թօփգարը» պալատի գրադարանին մէջ. 1273 թուականի «Սկեւոյի կիլիկեան Աւետարանը» յօդուածում, երկրորդ անգամ աւելի մանրամասն՝ «Շողակաթ» պարբերաթերթի 1966 համարում (էջ 94-98), ապա «Բազմավէպ»ի այս յօդուածում բերում է միայն ձեռագրի յիշատակարանները: Յիշատակարանը տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ ԺԳ. դար, Ա. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, (կզմ.), Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի հրտ., Երեսան 1984, էջ 433-435, հմր 348, վերցուած է այս յօդուածից:

Ինչպէս երեւում է, այս ձեռագրերի շարքում կան նաեւ Վե- նետիկի Միսիթարեան միաբանութեան ձեռագրեր, որոնց նկարա- գրութիւնները ձեռագրացուցակի մէջ չկան այն պատճառով, որ ձեռագրերը հատորների հրատարակութիւնից հետոյ են մուտք գործել մատենադարան<sup>56</sup>:

«Բագմավէպ»ի՝ հայերէն ձեռագրերի մասին տեղեկութիւններ հաղորդելը, նրա՝ աղբիւրի դեր ունենալը գիտակցուել եւ գործ- նականում օգտագործուել է Ի. դարի հայերէն ձեռագրագիտական ու աղբիւրագիտական մի շարք արժէքաւոր ուսումնասիրութիւն- ներում, ինչպէս Յակոբ Անասեանի «Հայկական մատենագիտութիւն»ը<sup>57</sup>, Աստղիկ Գէորգեանի «Հայ մանրանկարիչներ. Մատենագիտու- քիւն IX-XIX դարեր»<sup>58</sup>, Բեռնար Քուլիի՝ հայերէն ձեռագրացու- ցակների ու ձեռագրերի նկարագրութեամբ հրատարակումների մատենագիտութիւնը<sup>59</sup> եւ այլն:

Յատկապէս ցանկանում ենք առանձնացնել «Բագմավէպ»ի յօ- դուածների ներգրաւածութիւնը հայ աղբիւրագիտութեան ոչ պա- կաս կարեւոր նախաձեռնութեան՝ հայերէն ձեռագրերի յիշատակա- րանների ժողովածուների կազմութեան ժամանակ:

56 2024 թուականի Մայիսին Միաբանութիւն մեր գործուղման ընթացքում սուղեւ եմք այս ձեռագրերը՝ համեմատելով յօդուածում եղած տեղեկու- քիւնների հետ, ինչպէս նաեւ կատարել եմք որոշ ձեռագրագիտական աշ- խատանքներ՝ նախ եւ առաջ թերթակալելով մինչ այդ չթերթակալուած- ները: Մեր խորին շնորհակալութիւնն եմք յայտնում Վեներաբիլի Միսի- քարեան միաբանութեանը՝ Ս. Ղազարի Մայրավանքի մատենադարանում մեր հետազոտութիւնը կատարելու ու անհրաժեշտ բոլոր ձեռագրերը ստանալու թոյլտուութեան համար եւ յատկապէս մատենադարանի պա- տասխանատու Հ. Վահան վրդ. Օհանեանին՝ բոլոր հարցերում աջակցելու եւ ջերմ վերաբերմունքի համար:

57 Յ. ԱՆԱՍԵԱՆ, Հայկական մատենագիտութիւն Ե.-ԺԸ. դդ., հտ. Ա., Հայ- կական ՍՍՌ ԳԱ հրտ., Երեւան 1959, հտ. Բ., 1976, հտ. Գ., «Զանգակ- 97», 2004:

58 Ա. ԳԵՈՐԳԵԱՆ, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտութիւն IX-XIX դարեր, Գահիրէ 1998:

59 St'a B. COULIE, նշ. աշխ.:

Այսպէս, Ե՛Լ Ե-ԺԲ.<sup>60</sup>, Ե՛Լ ԺԳ.<sup>61</sup>, Ե՛Լ ԺԴ.<sup>62</sup>, Ե՛Լ ԺԵ.<sup>63</sup>, Ե՛Լ ԺԶ.<sup>64</sup> դարի յիշատակարանների հրատարակուած ժողովածուները օգտուել են «Բագմավէպ»ից՝ որպէս յիշատակարանի սկզբնաղբիւր:

Մեր ուսումնասիրութեան ժամանակ առանձնագրել ենք նա- եւ «Բագմավէպ»ի բոլոր այն յօդուածները, որոնք օգտագործուած են յիշատակարանների ժողովածուների կազմութեան համար: Դը- րանք են.

Բագմավէպի յօդուածը	Յիշատակարանների ժողովածուներ <sup>65</sup>
Հ. Ք. Զրաբեան, Ս. Ղազարու Մատենադարանին ամենափոքրիկ Աւետարանը, 120 (1962), 6-8, էջ 164-166	Ե-ԺԲ. դդ. յիշ-Բ, էջ 108, հմբ 128
Ա. Անդրեասեան, Պոլսոյ Սկեւոայի Աւետարանի յիշատակարանները, 126 (1968), 4-6, էջ 116-119	ԺԳ. դ. յիշ-Բ, էջ 433-435, հմբ 348
Հ. Բ. Սարգիսեան, Քննադատութիւն ի վերայ թղթոյն Մ. Խորենացոյ առ Սահակ Արծրունի եւ պատկերի Տիրամօրն ի Հոգեաց վանս, 45 (1887), 2, էջ 97-116	ԺԳ. դ. յիշ-Բ, էջ 112, հմբ 71

60 Ա. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, անդ:

61 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ ԺԳ. դար, Ա. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, (կզմ.), Հայկական ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի հրտ., Երեւան 1984:

62 ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Լ. ԽԱԶԻԿԵԱՆ, (կզմ.), Հայկական ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի հրտ., Երեւան 1950: Հայե- րէն ձեռագրերի յիշատակարաններ ԺԴ. դար, Լ. ԽԱԶԻԿԵԱՆ, – Ա. ՄԱԹԵ- ԻՈՍԵԱՆ – Ա. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, (կզմ.) մաս Ա., Նաիրի հրտ., Երեւան 2018, մաս Բ., 2020:

63 ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին, Լ. ԽԱԶԻԿԵԱՆ, (կզմ.), Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի հրտ., Երեւան, 1955, մաս երկրորդ, 1958, մաս երրորդ, 1967:

64 Հայերէն ձեռագրերի ԺԶ. դարի յիշատակարաններ (1601-1620), հտ. Ա, Վ. ՅԱՎՈՔԵԱՆ – Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, (կզմ.), Հայկական ՍՍՀ Գիտութիւն- ների Ակադեմիայի հրատարակչութիւն, Երեւան 1974, հտ. Բ, 1978, հտ. Գ, 1984:

65 Յիշատակարանների ժողովածուների վերնագրերը աղիւսակում տալիս եմք համառօտ՝ կարճ, պարզ ու արագընկալելի լինելու համար:

Յ. Քիրտեան, Դարձեալ Թորոս Տարօնցի, 105 (1947), 9-10, էջ 212-222	ԺԴ. յիշ-բ Ա., էջ 135-136, հմր 124, էջ 377-378, հմր 336
Յ. Քիրտեան, Ցուցակ ձեռագրաց «Յ. Քիրտեան» հաւաքածոյի, 148 (1990), 3-4, էջ 466-486	ԺԴ. յիշ-բ Բ., էջ 346, հմր 712
Ն. Քարամեանց, Ցուցակ Պեղիկի արքայական Մատենադարանի հայ ձեռագրաց, 44 (1886), 3, էջ 183-192	ԺԵ. յիշ-բ Բ., էջ 16, հմր 20,
Ա. Երեմեան, ԺԵ. դարի մի նոր ձեռագիր Աւետարան, 110 (1952), 10-12, էջ 243-245	ԺԵ. յիշ-բ Բ., էջ 124, հմր 164,
Ն. Քարամեանց, Ցուցակ Պեղիկի արքայական Մատենադարանի հայ ձեռագրաց, 44 (1886), 3, էջ 183-192	ԺԵ. յիշ-բ Ա., էջ 509, հմր 640
Հ. Ա. Ղազիկեան, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ, 126 (1968), 3-4, էջ 108-115, Հրտ. Յ. Քիրտեան	ԺԵ. յիշ-բ Ա., էջ 510, հմր 642 <sup>66</sup>
Հ. Ա. Ղազիկեան, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ, 126 (1968), 1-3, էջ 37-44, 4-6, էջ 108-115, Հրտ. Յ. Քիրտեան	ԺԵ. յիշ-բ Բ., էջ 236, հմր 360
Ա. Երեմեան, ԺԵ. դարի մի նոր գրչագիր Աւետարան, 110 (1952), 5-6, էջ 121-123	ԺԵ. յիշ-բ Բ., էջ 826-7, հմր 1221
Յ. Քիրտեան, Հայրապետ վարդապետ Ղուկիկի եւ Ներսէս եպիսկոպոս, 113 (1955), 4-5, էջ 100-108	ԺԵ. յիշ-բ Բ., էջ 40-44, հմր 65
Ա. Մելիք-Յակոբեան, Ա. Ամենափրկչեան մատենադարան գրչագիր հմր 36 Աւետարանը, 81(1924), 10, էջ 325-329	ԺԵ. յիշ-բ Բ., էջ 277, հմր 416
Ա. Մելիք-Յակոբեան, Շահ Աբաս Մեծի «շնորհած» կրօնի ազատութիւնը Բերիոյ հայերին, 83 (1926), 1, էջ 11-12	ԺԵ. յիշ-բ Բ., էջ 318-319, հմր 478
Հ. Վ. Յովհաննէսեան, Մագաղաթեայ Աւետարան մը, 108 (1950), 11-12, էջ 271-274	ԺԵ. յիշ-բ Գ., էջ 467, հմր 742

66 Այստեղ եւ յաջորդում թէև կայ նաև առանձին ձեռագրացուցակը, բայց ժողովածուում իբրև աղբիւր նշուած է միայն «Բազմավէպ»ի յօդուածը:

Վ. Թորգոմեան, Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին, 82 (1925), 5, էջ 134-137, ձեռ. վնտ. 1355, 80 (1923), էջ 140, ձեռ. վնտ. 1241 <sup>67</sup>	ԺԵ. յիշ-բ Գ., էջ 274-275, հմր 451 էջ 741, հմր 1128
Ա. Երեմեան, 17-րդ դարի մի գրչագիր Աւետարան, 1951, նոյեմբ.-դեկտ., էջ 310-316	ԺԵ. յիշ-բ Գ., էջ 335, հմր 536
Ն. Քարամեանց, Ցուցակ Պեղիկի արքայական Մատենադարանի հայ ձեռագրաց, 44 (1886), 3, էջ 183-192	ԺԵ. յիշ-բ Գ., էջ 467, հմր 741 էջ 584, հմր 901 էջ 752, հմր 1144
Հ. Վ. Յովհաննէսեան, Մագաղաթեայ Աւետարան մը, 108 (1950), 11-12, էջ 271-274	ԺԵ. յիշ-բ Գ., էջ 467, հմր 742

Աղիւսակում բերել ենք այն դէպքերը, երբ «Բազմավէպ»ը միակ աղբիւրն է<sup>68</sup>, զանց առնելով մնացած բոլոր օրինակները, երբ յիշատակարանի համար իբրեւ աղբիւր «Բազմավէպ»ից բացի տրուած է նաեւ ձեռագրացուցակ կամ այլ ուսումնասիրութիւն:

Ի. դարի 50ական թուականներից մինչեւ օրս հրատարակուած այս եւ այլ մատենագիտութիւններում ու ուսումնասիրութիւններում «Բազմավէպ»ի ձեռագրական յօդուածների ներառումն անշուշտ նշանակուած է, որ «Բազմավէպ»ը կատարել է իր գլխաւոր խնդիրներից մէկը՝ գիտական շրջանառութեան մէջ դնել հայերէն միջնադարեան ձեռագրերը եւ դառնալ աղբիւրագիտական լուրջ արժէքով հայագիտական հանդէս, որն իր այդ դերը պահում է ցարդ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պատմութեան ընթացքում «Բազմավէպ»ը եղել եւ մնում է հայագիտական կարեւոր հանդէսներից մէկը՝ շնորհիւ ե՛ւ իր նպատակների ու քաղաքականութեան, ե՛ւ իր խմբագիրների ու յօ-

67 Քանի որ վեներտիկի Ցուցակի Ը. հատորը դեռ տպագրուած չէր, ժողովածուում յիշատակարանը վերցուած է «Բազմավէպ»ի յօդուածից:

68 Մեր ցանկերում չկար եւ մեզ չյաջողուեց գտնել մէկ յօդուած, որ յիշատակարանների ժողովածու նշում է իբրև յիշատակարանի աղբիւր՝ վերցուած «Բազմավէպ»ից. ԺԳ. յիշ-բ, էջ 904-905, հմր 759:

դուաճագիրները, ե՛լ իր էջերում հրատարակած նիւթերի: Քննելով «Բազմավէպ»ում եղած ձեռագրական յօդուածները ու հրապարակումները նրանց աղբիւրագիտական կարեւորութեան տեսանկիւնից, ստուգելով նրանց հաղորդած տեղեկութեան առկայութիւնը հրապարակման ժամանակ եւ յետոյ տպագրուած ձեռագրացուցակներում, համեմատելով յիշատակարանների ժողովածուներում եղած յիշատակարանների հետ, գալիս ենք այն եզրակացութեան, որ «Բազմավէպ»ի յօդուածները աղբիւրագիտական արժէք ունեն ինչպէս Վենետիկի Մխիթարեան միաբանութեան ձեռագրերի, այնպէս էլ այլ հաւաքածուների ու անհատների մոտ գտնուող հայերէն ձեռագրերի մասին տեղեկութիւններով:

Այդ յօդուածները «Բազմավէպ»ի էջերում տպագրուել են ժ.թ. դարի վերջերից սկսած, երբ դեռեւս տպագրուած չէին հայերէն ձեռագրերի տարբեր հաւաքածուների ձեռագրացուցակները կամ նոր-նոր էին սկսուել տպագրուել: Այս առումով, կարեւոր էր «Բազմավէպ»ի՝ հայերէն ձեռագրերը գիտական շրջանառութեան մէջ դնելու եւ հանրութեանը հայերէն ձեռագրերի հետ ծանօթացնելու դերը: Ընդ որում, որոշ դէպքերում «Բազմավէպ»ում տպագրուել են թէեւ համառօտ, բայց ամբողջական ցուցակներ, ինչպէս 1889 թուականի Ն. Քարամեանցի «Յուցակ Պետլիցի արքայական Մատենադարանի հայ ձեռագրաց»ը կամ Ա. Ղազիկեանի «Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ»ն 1968ին:

Որոշ ժամանակ աղբիւրի արժէք ունեցող յօդուածների վերլուծութիւնն այսօր օգնում է «Բազմավէպ»ի դերն ու պատմութիւնը համակողմանի ներկայացնելու հարցում: Իսկ մինչ օրս ձեռագրի մասին տեղեկութեան միակ աղբիւր մնացած յօդուածները ունեն ոչ միայն պատմական, այլեւ գործական նշանակութիւն:

Նախ, նրանք մեզ տեղեկութիւններ են տալիս ոչ միայն յայտնի վայրերում պահուող, այլեւ այսօր անյայտ ձեռագրերի մասին: Սա նշանակում է, որ այս տեղեկութիւնների շնորհիւ մենք կարող ենք յետագայում նոյնականացնել վերստին գտնուած այս ձեռագրերից իւրաքանչիւրը: Ապա, ինչպէս ցոյց ենք տալիս յօդուածում, այս տեղեկութիւնները օգտագործուած են մի շարք կարեւոր աղբիւրագիտական ու մատենագիտական ժողովածուների կազմութեան ժամանակ: Ուրեմն, յօդուածների շնորհիւ այժմ անյայտ գտնուելու վայրով կամ կորսուած ձեռագրերը շարունակում են գիտական շրջանառութեան մէջ լինել: Միւս կողմից, դեռեւս կայ այս տեղեկութիւնների կիրառման անհրաժեշտութիւնը տար-

բեր հարցերում, օրինակ յիշատակարանների ժողովածուների ամբողջացման ժամանակ կարելի է հեշտօրէն օգտուել մեր քննութեան ժամանակ առանձնացրած ու մինչ օրս ժողովածուների մէջ չներառուած յիշատակարաններից: Նոյն կերպ, հայերէն ձեռագրերի վերաբերեալ տարբեր քննութիւնների ժամանակ՝ ձեռագրագիտական, արուեստաբանական, պատմագիտական, բանասիրական, պէտք է անպայման նկատի ունենալ նաեւ միայն «Բազմավէպ»ի յօդուածներից յայտնի տեղեկութիւնները:

ՏԱԹԵԻԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՔՆԱՐ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

## Summary

THE MANUSCRIPT HERITAGE OF «BAZMAVEP»  
AND ITS SIGNIFICANCE AS A SOURCE

TATEVIK MANUKYAN – KNAR HARUTYUNYAN

The rich heritage of Armenian manuscripts preserved by the Mekhitarist Congregation is showcased in eight volumes of manuscript catalogues, compiled by the Mekhitarist fathers and printed between 1914 and 1998. Alongside these volumes — and in some cases preceding them — the Mekhitarist fathers published numerous articles on Armenian manuscripts in the «Bazmavep», the longest-running Armenian periodical and official review of the Mekhitarist Congregation. Our article aimed to explore the «Bazmavep»'s role as a key source of information on Armenian manuscripts by analyzing articles that either served as primary references for manuscripts at the time of their publication or continue to hold this significance today.

These articles on Armenian manuscripts began appearing in the «Bazmavep» as early as the late 19th century. For example, a series of articles «Ցուցակ հայերէն գրչագրաց Մատենադարանի ուխտին Միխիթարայ» (Catalogue of Armenian Manuscripts in the Mekhitarist Congregation) published in 1891 discussed various manuscripts, predating the first volume of the Congregation's manuscript catalogue. From 1923 onward, the «Bazmavep» also featured articles by Dr. Torgomyan on medical manuscripts held at San Lazzaro, etc. Our study demonstrates that these articles not only addressed manuscripts housed within the Mekhitarist Congregation but also examined those from different parts of the world, as seen in N. Karamyants's article «Ցուցակ Պետրիկի արքայական Մատենադարանի հայ ձեռագրաց» (Catalogue of Armenian Manuscripts of the Royal Library of Berlin) in 1886, or S. Melik-Yakobean's article «Ս. Ամենափրկչեան մատենադարան գրչագիր հմր 36 Աւետարան» (Gospel Manuscript no. 36 in the Library of Holy Saviour of All) in 1924, or S. Eremean's, Y. Kyurtean's articles, etc. By isolating and studying these articles, our analysis highlights «Bazmavep»'s pivotal role in the promotion and scholarly circulation of Armenian manuscripts. Moreover, articles that remain unique sources of manuscript information — i.e., those not described in any catalogue or other publication —

are of particular value. Identifying such articles draws researchers' attention, especially given the lack of a comprehensive bibliography of the «Bazmavep».

The importance of these articles also lies in the valuable information they provide about scattered or lost Armenian manuscripts. The details contained within these articles can assist in the identification of these manuscripts, should they be rediscovered at any point in the future. Through our examination, we identified and verified these articles, checking their inclusion in the collections of Armenian manuscripts' colophons and highlighted those missing for potential inclusion in future collections.